ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 179

«01» 11 2012թ.

ք. Արտաշատ

ՏԻԳՐԱՆ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգքրի 158-րդ, 159-րդ և 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տիգրան Վիրաբյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը ներառյալ:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 180

<02> 11 2012թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 123 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 26-ի <<<<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին>> N 123 որոշման հավելվածում <<Թադևոսյան Դիանա>> բառերը փոխարինել <<Դումանյան Անահիտ>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 181

<<02>> << 11 >> 2012թ. գ. Արտաշատ

<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի 25-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 20.03.2012թ. N194-Ն, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 11.04.2012թ. N323, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 26.03.2012թ. N32-Ն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 21.03.2012թ. N1-Ն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 24.03.2012թ. N5-Ն և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի 04.04.2012թ. N1-Ն համատեղ հրամանով հաստատված <<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի անցկացման կարգի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջով.

Ստեղծել մրցույթի մարզային փուլի անցկացման հանձնաժողով համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 182

«02» 11 2012թ.

ք. Արտաշատ

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ , 159-րդ և 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝ "Սպարապետ Վազգեն Սարգսյանի անվան տուն-թանգարան"-ի տնօրեն Ամալյա Սարգսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 2012թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը ներառյալ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 183

«02» 11 2012թ.

ք. Արտաշատ

ԿԱՄՈ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգքրի 158-րդ, 159-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. ,,Գեղանիստի ԱԱՊԿ ,, ՓԲԸ-ի տնօրեն Կամո Ստեփանյանին թույլատրել օգտվելու 2012թ. ամենամյա արձակուրդի չօգտագործած 12 աշխատանքային օրից՝ ս/թ նոյեմբերի 12-ից նոյեմբերի 27-ը ներառյալ:

2. Տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել նույն կենտրոնի ընտանեկան բժիշկ Համազասպ Համազասպյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 184

<<07>> << 11 >> 2012թ. ք. Արտաշատ

ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով

2012թ. նոյեմբերի 7-ից Հասմիկ Գուրգենի Գասպարյանին ազատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյանի Արտակ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականություններից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 185

<<07>> << 11 >> 2012թ. ք. Արտաշատ

ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա., ենթակետի պահանջով.

Մինչև <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյանի Արտակ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակվելը 2012 թվականի նոյեմբերի 7-ից այդ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Հասմիկ Գուրգենի Գասպարյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ